

ԱՌԱՋԻԿԱ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ և ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Ըստ լրատվական միջոցների հաղորդումների փետրվարին, կառավարությունը խորհրդարան կներկայացնի նոր ընտրական օրենսգրքի նախագիծ:

Ընտրական օրենսդրության բարելավման և ընտրությունների արդյունքները հասարակության բոլոր անդամների համար վստահելի դարձնելու, ընտրակեղծիքների հնարավորությունները նվազեցնելու և ընտրական համակարգի նկատմամբ վստահությունը բարձրացնելու անհրաժեշտությունից ելնելով, արժեք մտածել ընտրողներին իրենց ընտրական իրավունքն իրականացնելու առավել լայն հնարավորությունների վերապահման և առավել կատարյալ ընտրական համակարգի կիրառման մասին:

Եթե օրենսդրությունը ընտրակեղծիքների հնարավորությունները չի բացառում ու իր մեջ չի ներառում ընտրակեղծիքների բացահայտման հստակ մեխանիզմների, նորմերի փաթեթ, ապա, դժվար թե ընտրակեղծիքներ չլինեն: Կստացվի այնպես, որ օրենսգրքով նախատեսված կլինի իրավական հիմքեր՝ կախված իրավիճակից ու իրադրությունից, ոչ արդար ընտրությունների արդյունքներն օրինական համարելու համար, ինչի փորձն արդեն դարձել է ավանդույթ Հայաստանում և նմանատիպ այլ երկրներում:

Եթե օրենսդրությամբ ընտրական թվերի օբյեկտիվ գնահատման և մանդատների բաշխման ճշգրիտ հաշվարկի նորմեր չեն սահմանվում, այսինքն՝ ընտրությունների արդյունքների ամփոփման սուբյեկտիվ մոտեցման հնարավորություններ են ընձեռվում, ապա նրանք, ովքեր հնարավորություն են ստանում ընտրակեղծիքներով իշխանության հասնել, դժվար թե չօգտվեն այդ հնարավորությունից: Ուստի, օրենսդրությամբ պետք է հնարավորություններ նախատեսել ընտրակեղծիքների դեմն առնելու համար՝ սահմանելով նորմեր, որոնք՝

1. Կբացառեն այլոց փոխարեն քվեարկություններ կազմակերպելու հնարավորությունը:
2. Քվեարկության և արդյունքների ամփոփման սուբյեկտիվ մոտեցումների հնարավորությունները կնվազեցնեն կամ կբացառեն: Քվեների հաշվվման գործառույթներն այնպես կկանոնավորեն, որ դրանք կեղծելու հնարավորությունները կհասցնեն նվազագույնի կամ կբացառեն:
3. Քվեարկության ընթացքի և արդյունքների ամփոփման գործառույթների վրա հասարակական ոչ կողմնակալ վերահսկողության հնարավորությունները կմեծացնեն:
4. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ոչ պատշաճ աշխատանքի արդյունքում ընտրական թվերի անհամապատասխանությունների առկայության դեպքում այդ տեղամասի քվեարկության արդյունքները, ըստ օրենքի, անվավեր կճանաչվեն և քվեարկության արդյունքներն անվավեր ճանաչված առանձին տեղամասում վերաքվեարկության հնարավորություն կընձեռեն: Եթե հաշվի առնվի տեղամասի ընտրողների թիվը, որը կփոխի մանդատների բաշխման հարաբերակցությունը:

Պարզ է, որ ընտրական օրենսդրությունը, որքան էլ կատարյալ լինի, միևնույնն է հասարակության մեծամասնության վախի, անտարբերության ու հիասթափության, պետական մեքենայի, հատկապես ուժային կառույցների հասարակության դեմ ուղղված գործողությունների արդյունքում, ընտրակեղծիքներով, զենքով, ստիպողաբար իշխանություն վերցնողն, այն կվերցնի: Չնայած դրա, լավ օրենսդրության առկայությունը հնարավորություն է հասարակության համար, գոնե օրենքների շրջանակում, փորձել հասնել արդարության:

Ամենայն հավանականությամբ նոր ընտրական օրենսգրքի նախագիծը իր մեջ ներ է առնելու ընտրական պրոցեսների վերահսկելիությանը և արժանահավատությանը միտված փոփոխություններ: Իսկ ավելի ճիշտ էլեկտրոնային քվեարկության հնարավորություններ, որոնք կառաջարկեն մատնահետքերով ընտրողի գրանցման և համակարգչով քվեարկության և քվեարկության օրը ինտերնետային հեռարձակման մեխանիզմներ: Ենթադրվում է, որ քվեարկության գործնթացը լինելու է ամբողջովին հրապարակային և հանձնաժողովի անդամների ու այլոց ներգործությունը քվեարկության գործնթացի վրա հասցվելու է մինիմումի:

ID քարտը, այդ էլեկտրոնային համակարգի մեջ մտցնելով, երևալու է ընտրողի տվյալները և համակարգը ստուգելով տվյալները թույլ է տալիս քվեարկել կամ ոչ: Այսինքն եթե նա մեկ անգամ արդեն քվեարկել է, նրա կողմից երկրորդ քվեարկությունը կարգելվի: Օրվա վերջում համակարգիչը կտա քվեարկության պատկերը, ինչի հետ կարող են ծանոթանալ բոլորը: Այսինքն ենթադրվում է, որ քվեարկությունը իրականացվելու է համակարգչով: Այս ամենը վատ չէ, սակայն եթե իրականացվելու է միայն էլեկտրոնային քվեարկություն, կամ եթե իրականացվի ձեռքով քվեաթերթիկի լրացում ու էլեկտրոնային քվեատուփերի կիրառմամբ քվեների հաշվարկ դժվար թե այն բացարձակ վստահություն ներշնչի: Քանի որ 1. չի բացառվում ընտրակեղծարարների հսկա բանակին մի քանի ID քարտերի տրամադրումն ու նրանց կողմից տարբեր տեղամասերում քվեարկության կազմակերպումը, 2. ընտրակեղծիքների և քվեների խեղաթյուրման ծրագրային ապահովման հնարավորությունը, 3. ընտրացուցակների հետ կապված խնդիրների լուծումը կմնա առկախված, 4. կմնա մարդկային գործոնների էական ազդեցությունը և չի վերանա ընտրական հանձնաժողովների կեղծիքներին մասնակցելու հնարավորությունները: Առավել վստահելի կլինեն եթե նախատեսվեր էլեկտրոնային եղանակով մատնահետքերի համադրությամբ գրանցում և իրականացվեր էլեկտրոնափաստաթղթային քվեարկություններ:

Մինչ այժմ գործող կարգի պահպանմամբ ընտրացուցակների էլեկտրոնային եղանակով, ըստ տեղամասերի, հրապարարակումը, տեղամասերում բոլորի համար տեսանելի տեղում փակցնելու և ընտրողներին դրանց հետ ծանոթանալու հնարավորության ապահովումը, ավելացնելով նաև քվեարկությունից հետո քվեարկության մասնակցաց ընտրողների ցուցակների հրապարակումը կամ հանրապետությունից բացակա ընտրողների ցուցակները նույնպես հրապարակելով, իսկ քվեարկության օրը ընտրատեղամասի էկրանին բոլորի համար տեսանելի եղանակով ընտրողի գրանցումը որոշակիորեն կկանխեն այլոց փոխարեն քվեարկելու հնարավորությունները: Էլեկտրոնափաստաթղթային քվեարկությունը ենթադրում է, որ արտաքին միջամտության հնարավորությունից զերծ մնալու հնարավորությամբ ապահովված և մինչ քվեարկությունը բոլորի համար թափանցիկ ձևով ստուգված, քվեմեքենան, միայն կենսաչափական տվյալների գրանցմամբ ու բազայում եղած տվյալի հետ համընկնելու դեպքում թույլ կտար, տվյալ տեղամասի ընտրողին, քվեարկել: Ընտրողը կքվեարկեր քվեախցիկում տեղադրված քվեմեքենայով, առանց որևէ մեկի միջամտության ու հետևելու հնարավորության: Քվեմեքենան կտպեր քվեաթերթիկը, ինչն ընտրողը կդնեն ծրարի մեջ և կզցեր տեսանելի տեղում տեղադրված թափանցիկ քվեատուփ: Այս դեպքում հնարավորություն կլինեն նաև մարդկանց կողմից ստուգելու քվեարկության արդյունքները, իսկ քվեմեքենայի

արդյունքները կերևար միայն քվեարկության ավարտից անմիջապես հետո և անմիջապես հասու կդառնար բոլորին:

Յուրաքանչյուր տեղամասի գրանցամեքենան միացված կլիներ ինտերնետային ցանցով կենտրոնական սերվերին, որի միջոցով հնարավոր կլիներ ստուգելու տեղամասում ընտրողների գրանցման գործառույթները: Իսկ քվեմեքենան (համակարգիչը) մինչ քվեարկության ավարտը ինտերնետային ցանցին միացված չի լինի, որպեսզի հնարավոր միջամտությունից կամ հակերային հարձակումներից զերծ լինի: Իսկ ինչ վերաբերում է այլ գործընթացների թափանցիկությանը և վերահսկողությանը, ապա Ընտրողի գրանցման ժամանակ պետք է ապահովել, որ նրա նկարը, անունը, ազգանունը, հասցեն, տարեթիվն ու քվեարկելու իրավունքը հաստատելու փաստը, երևա տեղամասում, բոլորի համար տեսանելի, համապատասխան էկրանին: Ընդ որում բոլոր ընտրողների տվյալները մեկ միասնական բազայում գրանցված լինելու հանգամանքը, կբացառի նույն ընտրողին տարբեր տեղամասերում քվեարկելու հնարավորությունից: Իսկ տեսանակահարահանող սարքերի առկայությունը տեղամասերում և ինտերնետային հեռարձագումը հնարավորություն կտար ցանկացողին, ցանկացած պահին տեսնել, ցանկացած տեղամասի իրադարձությունները, բացի քվեախցիկից ու քվեմեքենայի հետ կապված գործառույթներից:

Նշված քվեակարգի կիրառումը ենթադրում է, որ ընտրողի գրանցումն իրականացվում է մատնահետքի համադրությամբ գրանցամեքենայով, դիտորդների վերահսկողության ապահովման հնարավորությամբ, իսկ քվեարկությունը քվեմեքենայով և դրա կողմից տպված քվեաթերթիկով, որը ծրարով գցվում է քվետուփի և քվետուփի քվեթերթիկները կարող են հաշվվել քվեարկության ավարտից հետո տեղամասում: Այս դեպքում հասարակական դիտորդների և վստահված անձանց, յուրաքանչյուր քաղաքացու համար ավելանում են ընտրությունների վերահսկողական լրացուցիչ գործիքներ, նվազում են ինչ որ մարդկանց, հանձնաժողովի անդամների քվեարկության ընթացքի վրա ազդելու ու քվեների հաշվարկները կեղծելու հնարավորությունները, քանի որ կբացառվեն այլոց փոխարեն քվեարկությունները, լցոնումները, իսկ քվեների հաշվարկը կիրանացվի և էլեկտրոնային և փասթաթղթային եղանակներով: Նկարագրված քվեարկության մեխանիզմների դեպքում, գոնե քվեարկության ընթացքի և արդյունքների նկատմամբ վստահությունը կբարձրանա, այլապես հույս դնել այն բանի վրա, որ մարդկանց մեծ խմբերով վերահսկելով տեղամասերում ու արձանագրելով ընտրախախտումները, քվեարկություններն անվավեր կճանաչվեն կամ կեղծիքներ չեն լինի, ինչպես ցույց է տվել, մինչ այժմ եղած փորձը, քիչ հավանական է, հետևաբար և նման կլինի ինքնախաբեությամբ զբաղվելուն: Ինչ վերաբերում է նման քվեարկությունների ծախսատար լինելուն, ապա հարյուրավոր միլիոնների վարկերն, ասենք ասվալտապատման համար ավելի կարևոր չեն քան, դրանից շատ ավելի քիչ միջոցներով, արդար ընտրությունների խնդրի լուծումը:

Լյուդվիգ Խաչատրյան